

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՇՈՒԴ ԾԵՐԱՍԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Վաստակաշատ երաժշտագետ Արամ Քոչարյանի գիտական ժառանգության մի ստվար մասը վերաբերում է հայ աշուղական արվեստին: Նա երկար տարիներ հետևողականորեն զբաղվել է հայ աշուղական ստեղծագործությունների հավաքման, գրառման և ուսումնասիրության աշխատանքներով:¹ Սակայն առայսօր դրանց փոքր մասն է հրատարակված: Կարեռագոյն աշխատությունն, անշուշտ, «Հայ գուսանական երգեր» (Երևան, 1976) ժողովածուն է, որը նվիրված է հայ գուսանաշուղական երգային արվեստի զարգացման կարևոր փուլերին՝ առավել տիպական ստեղծագործությունների ընդգրկմանը:² Աշուղագիտական այս փայլուն աշխատությունը բացատիկ կարևոր տեղ է զբաղեցնում հայ պահնական պրոֆեսիոնալ արվեստի տարրեր ոլորտներին վերաբերող ուսումնասիրությունների ցանկում:

Ա. Քոչարյանի աշուղագիտական ժառանգության մեջ, ինչպես վկայում են արխիվային տվյալները, կարևոր տեղ են զբաղեցնում Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի կարկառուն դեմքերից մեկի՝ Ծերամի կյանքին ու ստեղծագործական ժառանգությանը վերաբերող բազմաբնույթ նյութերը, որոնք հավաստում են, որ վաստակաշատ երաժշտագիտը, ամենայն հավանականությամբ, մտադիր է եղել դրանք ընդգրկել հատուկ հետազոտության մեջ,³ ինչը կարող էր ոչ միայն ակնառու տեղ զբաղեցնել հայ աշուղագիտության մեջ, այլև արժանին հատուցել հայ մեծ աշուղի անգնահատելի վաստակին:⁴

Ներկա հրապարակման մեջ փորձել ենք ի մի բերել և արժեքավորել աշուղ Ծերամին վերաբերող Ա. Քոչարյանի ձեռագիր ուսումնասիրությունները, այդ թվում նաև՝ աշուղի երգերի այն ճայնագրությունների նոտագրված վերծանությունները, որոնք անտիկ և մանաւանդական մասը գտնվում է Ե. Զարնցի անվան Գրականության և արվեստի թանգարանում աշուղ Ծերամի անձնական ֆոնդում:

Վերոնշյալ նյութերը ցույց են տալիս, որ Ա. Քոչարյանն անձամբ ծանոթ լինելով աշուղի հետ, որոշ ժամանակ աշխատել է նրա հետ՝ խորամուխ լինելով արժեքավոր մանրամասների մեջ: Իհարկե, այստեղ նախ կարևոր տեղ է զբաղեցրել աշուղի կենսագրությունը:⁵

Բարձր գնահատելով Ծերամի երգաստեղծությունը, Ա. Քոչարյանը խորացել է նրա արվեստի ակլումբների, ինքնատիպ ոճի ձևավորման ու կայացման, նաև՝ երաժշտական լեզվի առանձնահատկությունների մեջ:

«20-22 տարեկան հասակում, - նշում է Ա. Քոչարյանը, - (Ծերամը – Հ.Հ.) լավ նվազողի համբավ և վայելում: Նրա շորջը կրկին ստեղծվում է յերաժշտական միջավայր: Նրա աշխատանքի վայրը դատնում է աշուղների միրած տեղը: Այստեղ աշուղ Զիվանին իր խրախույսներով վողերում և յերիտասարդ Գրիգորին»:⁶

¹ Ա. Քոչարյանի աշուղագիտական գործունեությանն անդրադարձել է երաժշտագետ Ա. Բաղդասարյանը: Տե՛ս «Արամ Քոչարյանը և հայ աշուղական երաժշտությունը», Արամ Քոչարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2004, էջ 39:

² Հայ աշուղական արվեստին Ա. Քոչարյանն անդրադարձել է նաև «Արմանական մանաւանդական մաս» (Մ.-Լ., 1939) գրքույթում:

³ Ա. Քոչարյանը Ծերամի ստեղծագործությանն անդրադարձել է «Գրիգոր Տալյան՝ աշուղ Ծերամ» հոդվածում («Ազմանական արվեստ», Եր., 1967, N 4, էջ 49):

⁴ Աշուղ Ծերամի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված են երկու գրքեր: Դրանց հեղինակները հիմնականում անդրադարձել են աշուղի երգաստեղծության բանաստեղծական ոճին: (Տե՛ս Ա. Երենեան, Աշուղ Գրիգոր Տալյան (Ծերամ), Վեճնետիկ, 1930: Վ. Տալյան, Ծերամ, Եր., 1989):

⁵ Ծերամի ֆոնդ (այսուհետև՝ ԾՖ), թ. 5, «Աշուղ Ծերամի կենսագրությունից» (գրված է Ծերամի ասածներից), 1935թ.: ԾՖ, թ. 4, «Աշուղ Ծերամի կյանքը» կենսագրություն (անթվական):

⁶ ԾՖ, թ. 4, էջ 1: Այստեղ և հետայժու ձեռագրական նյութը մեջբերում ենք բնօրինակի ուղղագրությամբ:

Աշուղագետը բացահայտում է Շերամի երգաստեղծության երկու հիմնական ակրιները. «Գրիգոր Տալյանը իր ստեղծագործության առաջին շրջանում երապարակ է զայխ յուրահատող վոճով և ուժեղ բափով. իբրև լիրիկ: Այս շրջանում նա երապարակ է բերում ընդհանուր արևելյան և մասնավորապես հայկական ժողովրդական վոճով յերգեր՝ գրված սեփական խոսքերի վրա»:⁷

Ինականաբար, նա աշուղի արվեստը դիտարկում է Ալեքսանդրապոլի քաղաքային երաժշտական կյանքի տարրերը ոլորտներում. «Նրա գործունեության կենտրոնն է հանդիսանում հարսանիքը, խրախճանքը, դայթեխանեն և ընդհանրապես յերեւ կարելի է այսպես արտահայտվել «արևելյան սալոնը»⁸: Սակայն Շերամին հաջողվում է «հակադրվել» կայուն ավանդույթների որոշ հիմնարար սկզբունքներին, մասնավորաբար՝ նա ազատ է նոտենում զրական խոսքի եղանակավորմանը: Այս ի նկատի ունի Ա. Սոչարյանը, երբ գրում է. «Շերամը ազատագրվեց հին աշուղական տրադիցիաներից և ստեղծեց նոր աշուղական լեզու, նոր յերգաստեղծման մի ձև»⁹:

Շերամի ինքնատիպ երաժշտամտածողությունը հիացմանը և մեծ հետաքրքրություն էր առաջացրել և նրա արվեստի երկրպագուների և մասնագետների շրջանում: Այս առումով նրա կյանքի բացատիկ արժեք ներկայացնող դրվագներից մեկը հանդիպում է Ինձն Կոմիտասի հետ 1905թ.: Շերամի կյանքին անդրադառն բոլոր երապարակումներում այս մասին նշվում է շատ հպատակիկ, գորեւ՝ խորհրդանշական առումով, որպես երկու նշանավոր արվեստագետների կարևոր հանդիպում: Եվ միայն Ա. Քոչարյանի գրառումներում ենք հանդիպում այնախին մանրամասներ, որոնք բույլ են տալիս արժեքավորելու ոչ միայն այդ հանդիպման ճակատագրական բնույթը, այլև բացահայտելու նախ՝ Կոմիտասի շահագործի վերաբերմունքը Շերամի, այս դեպքում նաև հայ աշուղական երգարվեստի հանդեպ, ապա և մեծ աշուղի երաժշտական լեզվի կարևորագույն արժանիքներից մեկը՝ ժողովրդական երաժշտամտածողության սկզբունքներին հոգեհարազար լինելը: Այս գրառումը կատարված է մի փոքրիկ թղթի կտորի վրա և, ամենայն հավանականությամբ, պատահական առիթով:¹⁰

Այստեղ աշուղը մանրամասն պատմում է այն մասին, որ իրեն 1905թ. գարնանը հրավիրել են Եջմիածին՝ մասնակցելու Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության համագումարին:¹¹ Աշխատանքի ավարտին Շերամը ելույթ է ունեցել մենահամերգով: Վերջինիս լուսական է եղել Կոմիտասը, որը հրավիրել է աշուղին Գևորգյան ճեմարան՝ ելույթ ունենալու ուսանողների համար: Համերգը կայացել է հաջորդ օրը և արժանացել է մեծ հավանության: Կոմիտասը և խրախուսել է աշուղին իր բարձր գնահատականվ և խնդրել, որ նա շարունակի հորինել երգեր հատկապես «Ալ ու ալվան ես հագել» երգի ոճով:

Այս փոքրիկ դրվագը լավագույնս խոսում է այն մասին, որ Կոմիտասն իր հետաքրքրությունների տեսադաշտում չի անտեսել աշուղական արվեստը, ավելին նա քաջատեղյակ է եղել նաև այս ոլորտին: Ինչ վերաբերում է Շերամի երգարվեստին տրված գնահատականի նշանակությանը, ապա այսուղեւ տեղին է մեջքերել Ա. Սոչարյանի դիտարկումը. «Տեսակցությունն ունենում է իր հետևանքները: Յերգիշը ազդված Կոմիտասի խոսքերից՝ հորինում է մի շաքը ժողովրդական բնույթ կրող յերգեր, ինչպես որինակ՝ «Բաղր մտա», «Ֆրիկնահովին», «Սիրուից չեկավ նամակ», «Աչք խունար», «Հազար երնեկ» և այլն»:¹²

Բարձր գնահատելով Շերամի երգաստեղծությունը և օգտվելով նրա հետ հանդիպելու հնարավորությունից, Ա. Քոչարյանը 1930-ական թթ. ձեռնամուխ է եղել նաև նրա երգերի ֆոնոգրաֆով ձայնագրությանն ու դրանց նոտագրմանը: Հետազայտմ,

⁷ ԾՖ, թ. 4, էջ 2:

⁸ ԾՖ, թ. 69, էջ 3:

⁹ Նոյյան:

¹⁰ ԾՖ, թ. 39:

¹¹ Նշենք, որ ինքը՝ Շերամը անդամակցել է այդ կուսակցությանը:

¹² ԾՖ, թ. 4, էջ 2:


աշուղի երգերի հրատարակված ժողովածուներում ընդգրկվել են երաժշտագետի կողմից ձայնագրված շուրջ 16 երգերը:¹³

Ծերամի անձնական արխիվում այժմ պահպում են ձեռագիր 19 երգեր, որոնք ձայնագրել ու նոտագրել է Ա. Քոչարյանը:¹⁴ Հրատարակված ժողովածուներում այդ նույն երգերի ձայնագրությունն ու նոտագրությունը կատարել է աշուղի որդիի՝ Վարդգես Տայանը: Ահա այդ երգերի անվանացանկը. «Թառլան, քառլան», «Ծամփորդ են», «Հալիլեց», «Մաղարեց», «Եղին ամպել ճյունը», «Էղի ոսկեթել մազերդ», «Հազար երնեկ», «Վարդ ցանցցի», «Սազերիցող տուր քնարիս լար հյուսեն», «Անջազյար յար», «Ամպերն ելան բլոր, բլոր», «Չորրոր քառլան», «Քեզանից մաս չունին», «Սերից երված պապակ սրտիս», «Էղի երկինքն ամպել է», «Սի բալա ե», «Պարտեզում վարդեր քացված», «Յարս կերպա սիրելի» («Փնջիկ-Մնջիկ»), «Տիուր եմ չամ ինչ անեն» («Սիրելուց չեկավ նամակ»), «Սիշտ քեզ եմ սիրել» («Ալյանադ դուշ ես»), «Դուս իմ մուսան ես»:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եմ Ծերամի երգերի տարածմանակյա ձայնագրությունները՝ կատարված Վ. Տայանի և Ա. Քոչարյանի ձեռամբ: Այս գրառումները հավասարաշափ արժեքավոր են այն առումով, որ երկուսն ել ձայնագրված են հեղինակային կատարումներից: Դրանց համադրումը, բնականարար, վառ կերպով ի ցոյց է դնում բանավոր ավանդույթին պատկանող այս ինքնատիպ հորինվածքների տարբերակային բնույթը: Դա վերաբերում է ինչպես մոնողիկ հյուսվածքին, այնպես էլ զարդելէցներին: Որպես օրինակ բերենք «Թառլան, քառլան» երգի առաջին տունը.


ԹԱՌԱՆ ԹԱՌԱՆ

Չայնոգրեց՝ Վ. Տայան



ԹԱՌԱՆ ԹԱՌԱՆ

Չայնոգրեց՝ Ա. Քոչարյան



¹³ Ծերամի երգերի ձայնագրված ժողովածուն առաջին անգամ հրատարակվել է 1948թ., երկրորդ հրատարակությունը՝ 1957թ.:

¹⁴ ԾՅ, թ. 67, N 1-19:

Բացի ձայնագրելուց, ինչպես նշեցինք սկզբում, Ա. Քոչարյանը մանրակրկիտ վերլուծել է որոշ երգեր: Դրանք թեև ի մի չեն երկել, սակայն մենական հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն Շերամի երգաստեղծության, այլև ընդհանուր առնամբ, երաժշտագետի աշխաղակիտական լարորատորիան ուսումնասիրելու առումներով: Ահա այն հիմնական չափորոշիչները, որոնք նա ընտրել է երգերի վերլուծության համար. թեմա, բովանդակություն, բանաստեղծական կառուցվածք, երաժշտական կառուցվածք, լադ, հնչյունաշար, տաղաչափություն:

Երգի թեման բնուրագրվում է համառոտ շարադրանքով. «Հնդկանուր Արևելյան ոճով միջնադարյան տաղերի եկեղեցական մեղեղիների տարրերով ծոխ օրնամենտիկայով» /«Էլի երկինքն ամպել է»/, «Պարային բնույթի ավելի ընդհանուր Արևելյան ոճով» /«Սի բալա է իմ յարը»/:


Երգի բովանդակության վերլուծության մեջ մանրակրկիտ խոսկում է աշուղի գրական լեզվի, համեմատությունների, սյուժետային գծի առանձնահատկությունների մասին. «Գրված է պետիկ ոճով, առանց բովանդակային, տրամարանական շեղումների, պիտի աշխամիստական-տրագիզմի աստիճանի» /«Սերից երկած պապակ սրտիս», «Անհատական լիրիկա, առանց ծայրահեղ պեսսիմիզմի ու օպտիմիզմի: ... Իր բարլանի – ջեյրանի «Չորրանքն» է նրան սկովում, «Չարմաղ հյուսի էրերալուց» է երկած սիրտը զովանում» /«Բաղեն բռած բլրով եմ»/:

Երգի բանաստեղծական կառուցվածքը ներառում է տողացի վերլուծություն. «Փոփխակի մասը կազմված է 2 եռատողերից, որից յուրաքանչյուրը բաղկացած է՝ առաջին սողը 5 վանկից, երկրորդը՝ 4, և երրորդը՝ 5 վանկերից» /«Դուն իմ մուսան»/, «Հիմնականում տեքստի 1-ին մասը կազմված է 6 և 5 վանկանի քառատողերից, որոնց ամեն մենքին /յուրաքանչյուրին/ հետևում է կրկներզը: 1-ին մասը կազմված է 5-ական վանկից բաղկացած երկասողերից: Ալգորիթմ է հիմնական տեքստի 2-րդ քառատողը 1-ինի կազմությամբ, որին հետևում է նոյն երկասող կրկներզը՝ «Անսիրտ, անջիզյար»: Մրան հետևում է կրկներզի 2-րդ մասը, կազմված 2 քառատող տներից, յուրաքանչյուր սողում 5-ական վանկ: Ենթ սկզբում է 2-րդ հիմնական սունը նոյն կառուցվածքով» /«Քեզանից մաս չունին»/:


Երգի երաժշտական կառուցվածքը, լադը, հնչյունաշարը վերլուծության մեջ հաճախ միաձույլ են, և վերաբերում են աշուղի երաժշտական լեզվի թե՛ ավանդական, թե՛ անհատական հորինվածքային բնորոշիչներին. «Երգի հիմնական մասը կազմված է հարմոնիկ միմորիկ վրա և կողամ՝ եզրափակիչ մասը – մաժոր:

Այսպիսով ստեղծվում է 2-լադային սկզբունք: Մինոր և մաժոր, դոմինանտային տոնիկայով: Մեղողյան սկզբում է 8-րդ աստիճանից և սահման ընթացքով իշմելով դեպի դրմինանտան նոյն ձևով ընթացման է դեպի օլյուսկամ՝ կազմելով 1-ին ֆրազան 8-րդ աստիճանի կիսակադենցյալով: /4 տակա/ 2-րդ ֆրազան նոյն ձևով սկսվելով իշմում է դեպի դոմինանտան՝ կազմելով նախադասություն /8 տակա/ դոմինանտային կադենցյալով, որը հանդիսանում է տոնիկան: Պերիոդը կազմվում է առաջին նախադասության անշեղ կրկնությամբ /«Ժառան, բառան»/:

Երգի տաղաչափությունը հիմնականում բերվում է աղյուսակների տեսքով.
«Բաղեն բռած բլրով եմ»



«Դուն իմ մուսան»



Ա. Քոչարյանի կողմից Ծերամի երգերի քննությունը առայսօր հայ աշուղագիտության ոլորտում կատարվող ուսումնասիրությունների համատեքստում կարևոր մի բաց է լրացնում: Ծիծու է, այս նյութը Էնվիրոնի է և չի հասցված ավարտի, սակայն մեծ հետարքրդություն է առաջացնում ինչպես աշուղական երգի ուսումնասիրության մերուդարանության, այնպես էլ Ծերամի երգերի բանակող ավանդույթից թխող տարրերակային ցուցիչների բացահայտման ու համադրական ուսումնասիրության առումով: Վերջինս առավել կարևորելով, ներկա հրապարակման վերջում ընդգրկել ենք աշուղի առավել հայտնի երգերի քոչարյանական վերձանությունները, որոնց լրիվ ցանկը, համոզված ենք, ապագայում կտպագրվի վաստակաշատ երաժշտագետի մյուս անտիպաշխատությունների շարքում:

ԵԼԱ ԵՐԿԻՆՍ ԱՄՊԵԼ, Է

Զոյնողընց Ա. Թօպայոն

The musical score consists of eight staves of music for voice and piano. The lyrics are written below each staff in Armenian. The vocal part uses a soprano range, and the piano part includes harmonic indications like '6' over certain chords.

տ - ի - եր - կինս ամ - պել է, յա - րըս ալ ձին
բամ - բել է, ին - ծն լսը - ոռ - վել կեր - քա.
բդս - չեն կա - պել ձամ - բել է: Նախ - շուն հավ - ցեր,
ա - նուշ հավ - բեր, չեն աշ - նար, ա - սեր յա - րիս
հե - ռիթ գար - կի բա - րե բար, ա - սեր յա - րիս
հե - ռիթ գար - կի բա - րե բար. Սա - միս մնու - մին
լո ըն փե - շի - ին ձամ - բա մի տա
զըմ - րուսան զու - շի - ին յա - րիս վեր ա -
բել կեր - քա, շի - գամ - րու վա - բել կեր - քա:

ՄՄ ♩ = 168 ՍԵՐԻՅ ԵՐՎԱԾ ՊԱՊԱԼԻ ՍԻՐՍՈՒ

Չայնագրից՝ Ա. Քոչարյան

Սե - րից եր - կած պա - պակ սըր - տիս նո - րեն դուն
էլ կը - ուկ զար - կիր. Ար - նոտ վեր - քիս, խո - րունկ վեր -
քիս, մահ - լա - մի տեղ դա - նակ զար - կիր, դա - նակ զար -
կիր, դա - նակ զար - կիր. Կա - ռակ, յար, սիր - տըս, ջի - գաս -
րըս, կր - տըր - վեց սա - զըս, քը - նա - րըս, Ձեր - բնս թը -
ռար, ուր գը - նա - ցիր, իմ կյան - քիս
սեր ու սար - դա - - րըս.

ՄԻ ԲԱԼԱ Ե ԷՍ ԻՄ ՅԱԽՋ

Չայնագրից՝ Ա. Քոչարյան

Մի բա - լա ե լս իմ յախջ
ու իմ յա - - - րըս, մի յան - դու -
ու իմ յախջ ու բոց, յախն - ծոց, յախ - վոց, կյսու - րնոց ճա -
- րըս, ջի - գյար - նե - րըս շի - նեց յանց, յախն - ծեց, յախ -
վեց, կյսու - րնեց ճա - - րըս, ջի - գյար - նե - րըս շի - նեց յանց:

ЗАПИСИ АРАМА КОЧАРЯНА О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ АШУГА ШЕРАМА

— Резюме —

— A. Арутюнян —

Творчество выдающегося ашуга Шерама интересовало многих исследователей. Некоторые из них в свое время записали и издали его произведения. Но, к сожалению, отдельное научное исследование об ашуге до сих пор отсутствует. С этой точки зрения важное значение приобретают некоторые исследовательские материалы, находящиеся в личном архиве ашуга в Музее литературы и искусства им. Е. Чаренца. Их автор – выдающийся музыковед Арам Кочарян. Это нотированные записи 19 песен ашуга, около половины которых имеют также любопытные аналитические записи. Несмотря на эмпирический и необобщенный характер этих записей, мы рассматриваем их в качестве важных материалов как в сфере ашуговедения, так и в исследовании жизни и творчества Шерама.